*խապատրաստականի, որոց մէջ դասախօսողներ կլինին ձեմարանի Ներրորդ. Լազարեանի ուսանողք առաջնորդութեամբ մանկավարժ Գ. Սեդրակ Մանդինեանցի:*

## ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇԻՒ

### ՄՏԻՑ ԵՒ ԾԱԽՈՒՑ ԳԱՆՁԱԿԱՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 1876 ԹՈՒԻՑ ՄԻՆՉԵՒ 1882 ԹԻՒՆ:

Կազմուած 27-ն Փետրուարի 1882 ամի

| Մ Ո Ւ Տ Ք. | 1876 թուից ց 1881 թուի Յունվարի 7 | | 1881 թուից ստացուած անդամական վճարներ | | 1881 թուին ստացուած անդամական վճար յաջորդ 1882 թ. համար | | Ամփոփ ստացուած | | Մնացորդ ստանալի. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ր. | Կ. | Ր. | Կ. | Ր. | Կ. | Ր. | Կ. | Ր. | Կ. |
| Ընկերութիւնը ունեցել է ի սկզբանէ անտի ցվերջ 1881 ամի հիմնադիր անդամներ տասը, որոց անդամական վճարը հասնումէ 3350 րուբ. այս գումարից ստացուած է. | 950 | | 150 | | | | 1100 | | 2250 | |
| Անփոփոխ անդամներ 11, որոց անդամական վճարի գումարը հասնումէ 550 րուբ. այս գումարից ստացուած է. | | | 130 | | | | 130 | | 420 | |
| Տարեկան անդամներ 75 որոց անդամական վճարը հասնումէ 242 րուբ. և 1881 թուականում ստացուած է 1882 թուականի համար անդամական վճար 102 րուբ. ամէնն 344 ր. այս գումարից ստացուած է. | 23 | | 134 | | 102 | | 259 | | 85 | |
| Տոկոս դրամոց 1016 րուբ. 20 կ. որի մէջ հաշուած է 1882 թուի 1400 րուբլու հինգ ամսուայ տոկոսն. | | | 1016 | 20 | | | 1016 | 20 | | |
| Միանուագ նուիրատւութիւն թէ բանաւոր կտակներով և թէ ի յիշատակ ննջեցելոց իւրեանց. | 693 | 30 | 11 | | | | 704 | 30 | | |
| Կառքի (բալտախինի) վարձ. | 31 | | 27 | | | | 58 | | | |
| Գանձանակարգամ. | | | 59 | 10 | | | 59 | 10 | | |
| Ընդամենն է . | | | | | | | 3326 | 60 | 2755 | |

| ԾԱԽՔ. | Յունուարից 1881 ամի Ր. | Կ. |
|---|---|---|
| Գիւղական ծախուց համար տուած է. | 24 | 61 |
| Օտարական աղքատների բնակութեան տան վարձ է տուած. | 10 | |
| Տեղական 17 աղքատ ընտանիքի համար տուած է. | 160 | |
| Օտարական աղքատներին տուած է ճանապարհածախք. | 40 | |
| Աղքատանոցում բնակւող աղքատների համար եղած է ուտելիքի և վառելիքի ծախք. | 25 | 29 |
| Մէկ օտարականի թաղման համար եղած է ծախք. | 3 | 30 |
| Ընդամենն . . | 263 | 20 |

Մնացորդն. — Երկու հարիւր վաթսուն երեք րուբլ. քսան կոպէկ ծախքը 3326 րուբլ. 60 կոպէկ մուտքից հանելով մնայ առ 1-ն Յունվարի 1882 ամի պատրաստի գումար երեք հազար վաթսուն երեք րուբլ. քառասուն կոպէկ.

Բ. 2755 րուբլ. ապառիկի մէջ հաշվումէ Նաբաթեանցի 1400 րուբ. որը տարեկան 100 րուբ. տալով լրացնելու է 14 տարումը համաձայն իւր ստորագրութեան, և Յովհաննէս Իսահակեանցի 500 մանէթն, որ լրացնելու է տասը տարումը.

Նախագահ ժողովոյն — Աղաբէկ Քալանթարեան

Անդամք —
Ղ. Ս. Յովհաննիսեան
Մկրտիչ Թ. Աթանասեան
Յակոբ Լիսեան
Մարտիրոս Նաբաթեանց
Աղէքսանդր Իսահակեան

Ատենադպիր — Գ. Բաբայեան.

## ՆԱՄԱԿ ԱԳՔԻՐՄԱՆԻՑ.

Յորմէ հետէ պ. Ծերոն Աստուածատուրեան, այն ազգասէր և օգտակար հոգաբարձուն, բառերու բացարձակ նշանակութեամբ, 30 ամեայ այս պաշտօնատարը յակամայից ստիպուեցաւ ձեռք քաշել դպրոցէն, դպրոցի դրութիւնը օր քան զօր վատթարացաւ.

Նոր հոգաբարձուք հապճեպով ձեռնարկեցին յԱրարատ խմբագրեալ ծխական դպրոցաց այն ծրագիրը քննադատելով, դատափետել և անյարմար համարել զայն, որ շաբաթը միայն 6 դաս ռուսերէն և 18 դաս հայերէն առարկաներու ժամանակացոյց մ' կը պարունակէ յինքեան. Ինչպէս ըսի, անյարմար գտեցին աս ժամանակացոյցը, և խմբագրեցին